

Հաստատում եմ  
Տնօրեն՝  
Ն. Մարկոսյան  
-----/ստ./  
--- ----- 2022թ.

**Թեմատիկ պլան  
2022-2023 ուսումնական տարի**

Առարկա՝ Աշխարհագրություն  
Ուսուցիչ՝ Ա. Այվազյան  
Դասարան՝ 6-րդ  
Շաբաթական ժամերի քանակ՝ 1 ժամ  
Տարեկան ժամերի քանակ՝ 34 ժամ

**6-րդ դասարան**  
**Աշխարհագրություն**

Ժամ	Էջ	Թեմա 1. <b>Աշխարհագրական թաղանթ</b>
		<ul style="list-style-type: none"> <li>Գաղափար կազմի աշխարհագրական թաղանթի, նրա ոլորտային կառուցվածքի մասին, ծանոթանա աշխարհագրական թաղանթի զարգացման դարաշրջաններին, գաղափար կազմի օդային զանգվածների, կլիմայական գոտիների և Երկրի բնական զոնաների մասին, հասկանա վերընթաց գոտիականության երևույթը:</li> </ul>
		<ul style="list-style-type: none"> <li>Իմանաաշխարհագրականթաղանթի ոլորտները, նրա զարգացման դարաշրջանները և դրանցում ընթացող առավել կարևոր իրադարձությունները, Երկրի տարիքը:</li> <li>կարողանա թվարկել, քարտեզի վրա ցույց տալ և մակագրել կլիմայական գոտիներ /ցանկացած 4-5/, բնական զոնաներ /առնվազն 3/, օդային զանգվածները, իմանա բնական զոնաների տարբերության պատճառները:</li> </ul>
1	5-8	<a href="#"><u>Աշխարհագրականթաղանթ. կառուցվածքը , հատկանիշները</u></a>
		<ul style="list-style-type: none"> <li>Գաղափար կազմի աշխարհագրական թաղանթի մասին, աշխարհագրական թաղանթի ոլորտային կառուցվածքի մասին, աշխարհագրական թաղանթի չափսերի մասին:</li> </ul>
		<ul style="list-style-type: none"> <li>Իմանաաշխարհագրական թաղանթի ոլորտները, հզորությունը, կարողանա սահմանել &lt;&lt;աշխարհագրական թաղանթ&gt;&gt; հասկացությունը:</li> </ul>
1	9-13	<a href="#"><u>Աշխարհագրական թաղանթի զարգացումը:Երկրագնդի խոշոր պլատֆորմները</u></a>
		<ul style="list-style-type: none"> <li>Գաղափար կազմի Երկիր մոլորակի տարիքի մասին, ծանոթանա աշխարհագրական թաղանթի զարգացման դարաշրջաններին, իմանակյանքի ծագման դարաշրջանը, գաղափար ունենա հնագույն դարաշրջանի մեկ միասնական մայրցամաքի՝ Պանգեյի մասին:</li> </ul>
		<ul style="list-style-type: none"> <li>Իմանա Երկրի տարիքը, իմանա աշխարհագրական թաղանթի զարգացման դարաշրջանները, իմանա ` որտեղ և որ դարաշրջանում է ծագել կյանքը, ինչպիսի տեսք են ունեցել մայրցամաքները մինչև տրոհվելը և ինչպես է կոչվել մեկ միասնական հնագույն մայրցամաքը:</li> </ul>
1	14-20	<a href="#"><u>Օդային զանգվածներ , կլիմայական գոտիներ</u></a>
		<ul style="list-style-type: none"> <li>Գաղափար կազմի օդային զանգվածների և կլիմայական գոտիների մասին, հասկանա, որ օդային զանգվածներն իրարից տարբերվում են ֆիզիկական հատկանիշներով՝ ջերմությամբ, խոնավությամբ, թափանցիկությամբ, ճնշմամբ:</li> </ul>

Վերջնարդյունքները		<ul style="list-style-type: none"> <li>Կարողանա թվարկել օդային զանգվածները, օդային զանգվածների հատկանիշներից / մինչև երկու հատկանիշ/, թվարկել և քարտեզի վրա ցույց տալ մի քանի հիմնական կլիմայական գոտիներ:</li> </ul>
1	21-25	<a href="#">Հորիզոնական զոնայականություն, վերընթաց գոտիականություն</a>
Նպատակը		<ul style="list-style-type: none"> <li>Գաղափար կազմի բնական զոնայի մասին, հասկանա, ինչ է վերընթաց գոտիականությունը և երկրագնդի որ շրջաններին է այն բնորոշ:</li> </ul>
Վերջնարդյունքները		<ul style="list-style-type: none"> <li>Իմանա բնական զոնաների տարբերության պատճառները, իմանա ինչ է վերընթաց գոտիականությունը, կարողանա թվարկել երեք բնական զոնա:</li> </ul>
1	26-31	<a href="#">Բնական զոնաներ , դրանց աշխարհագրական տարածումը</a>
Նպատակը		<ul style="list-style-type: none"> <li>Գաղափար կազմի հիմնական բնական զոնաների մասին, պատկերացում կազմի, որ բնական զոնաները հարթավայրային տարածքներում իրար հերթափոխում են հիմնականում բևեռներից դեպի հասարակած:</li> </ul>
Վերջնարդյունքները		<ul style="list-style-type: none"> <li>Կարողանա տարբերել անապատ, անտառ, սավանա բնական զոնաները, կարողանա թվարկել այդ զոնաներում հանդիպող բույսեր և կենդանիներ, համապատասխան թեմատիկ քարտեզի վրա ցույց տալ սավանաների, անտառների և անապատների բնական զոնաները:</li> </ul>
		<b>Թեմա 2. Մայրցամաքներ և օվկիանոսներ</b>
Նպատակը		<ul style="list-style-type: none"> <li>Իմանա մայրցամաքներն ու օվկիանոսները, գաղափար կազմի աշխարհամասերի մասին, իմանա այն մայրցամաքը, որում գտնվում է ինքը:</li> </ul>
Վերջնարդյունքները		<ul style="list-style-type: none"> <li>Կարողանա թվարկել և քարտեզի վրա ցույց տալ մայրցամաքները, օվկիանոսները, գտնել մեր երկրի տեղը աշխարհի քարտեզում:</li> </ul>
1	32-34	<a href="#">Ի՞նչ է ուսումնասիրում մայրցամաքների և օվկիանոսների աշխարհագրությունը</a>
		<b>Թեմա 3. Աֆրիկա</b>
Նպատակը		<ul style="list-style-type: none"> <li>Ծանոթացնել մակերևույթի հիմնական ձևերին, աշխարհագրական դիրքին՝ ըստ օվկիանոսների, գաղափար կազմի մայրցամաքի չափերի մասին:</li> <li>Գաղափար կազմի Աֆրիկայի կլիմայական գոտիների մասին և ծանոթանա Աֆրիկայի խոշոր գետերին ու լճերին:</li> <li>Ծանոթացնել Աֆրիկայում տարածված բնական զոնաներին:</li> <li>Գաղափար կազմի Աֆրիկայում տարածված կենդանական աշխարհի մասին:</li> </ul>
Վերջնարդյունքները		<p>Օգտվելով թեմատիկ քարտեզներից՝</p> <ul style="list-style-type: none"> <li>Իմանա Աֆրիկայի ամենաբարձր լեռը /Կիլիմանջարո/:</li> <li>Իմանա Աֆրիկայի ավերը ողողող օվկիանոսները և ամենամեծ կղզին /Մադագասկար/:</li> <li>Թվարկել մեկ կամ երկու կլիմայական գոտիներ և բնական</li> </ul>

		<p>զոնաներ, Աֆրիկայում տարածված երկու անապատ :</p> <ul style="list-style-type: none"> <li>Ներկայացնել Աֆրիկայում տարածված մի քանի կենդանու և բույսի տեսակներ:</li> </ul>
1	35-40	<a href="#">Աշխարհագրական դիրքը, ավազիձը, ռելիեֆը</a>
1	40-47	<a href="#">Կլիման, ներքին ջրերը</a>
1	47-52	<a href="#">Բնական զոնաները: Սավանաների զոնայի բնութագիրը</a>
		<b>Թեմա 4. Ավստրալիա</b>
Նպատակը		<ul style="list-style-type: none"> <li>Պատկերացում կազմի, որ Ավստրալիան աշխարհի ամենափոքր, ամենաչոր մայրցամաքն է, ծանոթանա ավերը ողողող օվկիանոսներին և իմանա մայրցամաքի ամենաբարձր գագաթը:</li> <li>Գաղափար կազմի «Էնդեմիկ» հասկացության մասին, ծանոթանա Ավստրալիայում տարածված էնդեմիկ բույսերի և կենդանիների տեսակներին:</li> </ul>
Վերջնար- դյունքները		<ul style="list-style-type: none"> <li>Կարողանա քարտեզի վրա ցույց տալ Ավստրալիա մայրցամաքը, Ավստրալական Միությունը, ավերը ողողող օվկիանոսները, ամենաբարձր լեռնագագաթը և դրանք կարողանա մակագրել ուրվագծային քարտեզի վրա՝ օգտվելով համապատասխան քարտեզներից և ատլասներից:</li> <li>Կարողանա բացատրել «Էնդեմիկ» հասկացությունը, թվարկել մի քանի էնդեմիկ բույսեր և կենդանիներ:</li> </ul>
1	53-58	<a href="#">Ընդհանուր բնութագիրը</a>
1	59-62	<a href="#">Բուսական և կենդանական աշխարհի յուրահատկությունները</a>
		<b>Թեմա 5. Անտարկտիդա</b>
Նպատակը		<ul style="list-style-type: none"> <li>Ծանոթանա Անտարկտիդայի աշխարհագրական դիրքին՝ ըստ օվկիանոսների, կլիմայի առանձնահատկությանը:</li> <li>Գաղափար կազմի Անտարկտիդայի ամենաբարձր լեռան և կենդանական աշխարհի էնդեմիկ տեսակների վերաբերյալ:</li> </ul>
Վերջնար- դյունքները		<ul style="list-style-type: none"> <li>Օգտվելով քարտեզներից ներկայացնել Անտարկտիդայի ավերը ողողող օվկիանոսները:</li> <li>Համառոտ բնութագրել Անտարկտիդայի կլիման ու օրգանական աշխարհը:</li> </ul>
1	63-69	<a href="#">Ընդհանուր բնութագիրը</a>
1		<i>Թեմատիկ գրավոր աշխատանք</i>
1		Կրկնություն
		<b>Թեմա 6. Հարավային Ամերիկա</b>
Նպատակը		<ul style="list-style-type: none"> <li>Գաղափար կազմի մայրցամաքի աշխարհագրական դիրքի, ավերը ողողող օվկիանոսների մասին:</li> <li>Ծանոթ լինի կարևոր աշխարհագրական օբյեկտների՝ ամենաբարձր լեռնագագաթի, ամենամեծ հարթավայրի, ամենաչրառատ գետի, ամենաբարձրադիր քաղցրահամ լճի, ամենաբարձր ջրվեժի, ամենաչոր անապատի անուններին և գտնվելու վայրերին:</li> <li>Գաղափար կազմի առավել մեծ տարածում ունեցող բնական զոնաների և մայրցամաքում տարածված մի քանի բույսերի և կենդանիների մասին:</li> </ul>
Վերջնար- դյունքները		<ul style="list-style-type: none"> <li>Իմանա մայրցամաքի աշխարհագրական դիրքի կարևոր առանձնահատկությունները, ավերը ողողող օվկիանոսները:</li> </ul>

		<ul style="list-style-type: none"> <li>Կարողանա թվարկել կարևոր աշխարհագրական օբյեկտների և մայրցամաքում տարածված մի քանի բույսերի ու կենդանիների անուններ:</li> <li>Կարողանա քարտեզի վրա ցույց տալ և ուրվագծային քարտեզի վրա մակագրել՝ Հարավային Ամերիկա մայրցամաքը, ավերը ողողող օվկիանոսները, Անդյան լեռները, Ակոնկագուա լեռը, Ամազոն գետը՝ օգտվելով դասագրքի քարտեզներից կամ ատլասներից:</li> </ul>
1	71-75	<a href="#">Աշխարհագրական դիրքը, ավագիծը, մակերևույթը</a>
1	76-82	<a href="#">Կլիման, ներքին ջրերը</a>
1	83-88	<a href="#">Բնական զոնաները: Վերընթաց գոտիականությունն Անդերում</a>
1		<i>Գործնական աշխատանք</i>
		<b>Թեմա 7. Հյուսիսային Ամերիկա</b>
Նպատակը		<ul style="list-style-type: none"> <li>Ծանոթացնել մայրցամաքի աշխարհագրական դիրքին, ավերը ողողող օվկիանոսներին, ավերի մոտ գտնվող ամենամեծ կղզուն ,մակերևույթի խոշոր ձևերին:</li> <li>Գաղափար կազմի Հյուսիսային Ամերիկայի կլիմայական գոտիների մասին:</li> <li>Ծանոթացնել Հյուսիսային Ամերիկայում տարածված մի քանի գետերի և լճերի:</li> </ul>
Վերջնարդյունքները		<ul style="list-style-type: none"> <li>Իմանա մայրցամաքի ավերը ողողող օվկիանոսները, նրա ավերի մոտ գտնվող ամենամեծ կղզին: Իմանա նրա ամենաբարձր լեռը և ամենացածր կետը:</li> <li>Համառոտ բնութագրի մեկ կլիմայական գոտի, ներկայացնի տոռնադո քամին: Իմանա երկու գետի և լճի անուն և տեղը քարտեզի վրա, Նիագարա ջրվեժը և տեղը քարտեզի վրա:</li> <li>Բնութագրել մեկ բնական զոնա, իմանալ այնտեղ ապրող և աճող մի քանի բույսի և կենդանու անուն:</li> <li>Իմանա Հյուսիսային Ամերիկայում տարածված բնական զոնաները:</li> </ul>
1	89-94	<a href="#">Աշխարհագրական դիրքը, ավագիծը, մակերևույթը</a>
1	95-101	<a href="#">Կլիման, ներքին ջրերը</a>
1	102-106	<a href="#">Բնական զոնաները</a>
Ժամ	Կետ	<b>Թեմա 8. Եվրասիա</b>
Նպատակը		<ul style="list-style-type: none"> <li>Ծանոթացնել մայրցամաքի բնությանը և ցույց տալ աշխարհագրական դիրքի բնական օբյեկտների և երևույթների տեղաբաշխման տարածական առանձնահատկությունները:</li> </ul>
Վերջնարդյունքները		<p>Օգտվելով թեմատիկ քարտեզներից՝</p> <ul style="list-style-type: none"> <li>Բնութագրել մայրցամաքը, թվարկել մակերևույթի հիմնական ձևերը, գետերն ու լճերը:</li> <li>Բնութագրել կլիմայական գոտիները և բնական զոնաները:</li> </ul>
1	108-113	<a href="#">Աշխարհագրական դիրքը, ավերը ողողող ծովերը, ավագիծը</a>
1	114-	<a href="#">Երկրաբանական կառուցվածքը: Երկրաշարժերի և հրաբուխների</a>

	116	<a href="#">տարածաման շրջանները</a>
1	117-119	<a href="#">Մակերևույթը, խոշոր հարթավայրերը և լեռները</a>
1	120-122	<a href="#">Եվրասիայի կլիման</a>
1	123-128	<a href="#">Կլիմայական գոտիները և մարզերը</a>
1	129-135	<a href="#">Եվրասիայի ներքին ջրերը</a>
1	136-139	<a href="#">Բնական զոնաները: Բարեխառն գոտու անտառներ և տափաստաններ</a>
		<b>Թեմա 9. Օվկիանոսներ</b>
Նպատակը		<ul style="list-style-type: none"> <li>• Ծանոթացնել օվկիանոսների բնաշխարհին և ցույց տալ աշխարհագրական դիրքի ազդեցությունն օվկիանոսներում տեղի ունեցող ֆիզիկաաշխարհագրական գործընթացների վրա, ծանոթացնել ջրաբանական ռեժիմին, օրգանական աշխարհին:</li> </ul>
Վերջնարդյունքները		<p>Օգտվելով թեմատիկ քարտեզներից՝</p> <ul style="list-style-type: none"> <li>• Բնութագրել օվկիանոսները, համեմատել ջրի ջերմային և ֆիզիկական հատկանիշները յուրաքանչյուր օվկիանոսի համար:</li> <li>• Ներկայացնել օվկիանոսների դերն ու նշանակությունը մարդու կյանքում:</li> </ul>
1	140-143	<a href="#">Խաղաղ և Հյուսիսային սառուցյալ օվկիանոսների բնութագիրը</a>
1	143-147	<a href="#">Ատլանտյան և Հնդկական օվկիանոսների բնութագիրը</a>
1		Գործնական աշխատանք
1		ԹԵՄԱՏԻՎ ԳՐԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔ
1		ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆ
1		Ամփոփում

[Թեմատիկ պլան](#)